[1] Դուրս գրման ամսաթիվ			**Հարկային հաշիվ** (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
15	Հոկտեմբեր	2019 թ.		Ա	1285714139
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
15	Հոկտեմբեր	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ				N 11500166513800					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն				N 900011000834					
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՍԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Ցեղ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	44109218դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոնը, գործակալությունը, անունը, ազգանունը

պաշտոնը, գործակալությունը, անունը, ազգանունը

15/10/2019 14:33:13

ՈՐՈՇՈՒՄ

Հետմահու-դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

«03» մայիս 2019 թ. ք. Մասիս

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության քննիչ՝ Ա. Ս. Բաղդասարյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 44109218 քրեական գործի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի նոյեմբերի 21-ին՝ ժամը 19:25-ին ՕԿԿ-ից զանգահարել են ՀՀ ոստիկանության Մասիսի բաժին և հայտնել, որ իրենց է զանգահարել անհայտ քաղաքացի և հայտնել, Արարատի մարզի Մարմարաշեն գյուղի 2/15 տանը մի տղա իրեն կախել է:

Նախապատրաստված նյութերով պարզվել է, որ 2018 թվականի նոյեմբերի 21-ին ժամը 19:00 -ի սահմաններում Մելիք Կարապետյանը զանգահարել է որդու՝ Արտյոմ Մելիքի Կարապետյանի բջջային հեռախոսին, ով չի պատասխանել: Դրանից հետո եկել է տուն և երբ մտել է բակ տեսել է, որ տանիք բարձրանալու փայտյա աստիճանը չկա, բերել է մյուս տան երկաթյա աստիճանը, բարձրացել է տանիք և այնտեղ տեսել որդուն՝ Արտյոմ Մելիքի Կարապետյանին տանիքից պարանով կախված վիճակում:

22.11.2018թ. նշանակվել են դիակի դատաբժշկական փորձաքննություն:

20.12.2018թ. ՀՀ Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժին Արարատի մարզի Մարմարաշեն գյուղի 25 փողոց տուն 3 հասցեի բնակիչ Մելիք Ատոմի Կարապետյանից դիմում է ստացվել այն մասին, որ իր որդին՝ Արտյոմ Մելիքի Կարապետյանը արտաամուսնական կապերի մեջ է եղել նույն գյուղի բնակիչ Գոհար Կարապետյանի հետ: Ինքը բազմիցս հորդորել է դադարեցնել հարաբերությունները Գոհար Կարապետյանի և նրա ընտանիքի հետ, սակայն որդին շարունակել է հարաբերությունները Գոհարի հետ: Իր որդու կախվելու մեջ մեղավոր է տեսնում Գոհար և Վահան Կարապետյաններին:

20.12..2018թ.-ին դեպքի առթիվ ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, հարուցվել է թիվ 44109218 քրեական գործը:

20.12.2018թ. որոշում է կայացվել Արտյոմ Մելիքի Կարապետյանին տուժող ճանաչելու մասին: 21.12.2018թ. Արտյոմ Մելիքի Կարապետյանի եղբայր Նարեկ Մելիքի Կարապետյանը Մասիսի քննչական բաժին դիմում է ներկայացրել իրեն տուժողի իրավահաջորդ ճանաչելու խնդրանքով: Նույն օրը որոշում է կայացվել Նարեկ Մելիքի Կարապետյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու մասին:

Նախաքննության ընթացքում Նարեկ Կարապետյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2018թ. նոյեմբերի 21-ին Ժամը 18:30-ից մինչև 19:00 սահմաններում իրեն զանգել է Վահանը, որը իր ազգականն է և Գոհարի ամուսինը, ասել է, որ իրենք պայմանավորվել էին, որ Արտյոմը Գոհարի ու իր ընտանիքի հետ կապ չի ունենալու հիմա ինչի է նամակ գրել: Ինքը պատասխանել է թե ինչ ես ուզում ասել, և ինչ է գրել:

Վահանը ասել է, Արտյոմը գրել է, որ ես էլ սենց չեմ կարողանում: Ինքը նորից հարցրել է թե դա ինչ է նշանակում, Վահանը պատասխանել է, որ ինքն էլ չգիտի: Դրանից հետո ինքը հեռախոսը փոխանցել է հորը: Հեռախոսով շարունակել է խոսել հայրը՝ Մելիք Կարապետյանը:

Նախաքննության ընթացքում Մելիք Կարապետյանը ցուցմունք է տվել այն մասին, որ, Ժամը 19:00-ի սահմաններում Նարեկի հեռախոսի վրա զանգ է եկել, Նարեկը երկու բառ խոսելուց հետո, հեռախոսը փոխանցել է իրեն ասելով, թե պապ նայի տես Վահան հոպարը ինչա ասում: Ինքը վերցրել է հեռախոսը և խոսել: Վահանը իրեն ասել է, որ քո տղեն իմ կնոջը՝ Գոհարին սաբշենի է ուղարկել, հետո ասել է, որ իր տղուն ուղարկել է հայրական տունը, որտեղ Արտյոմի մեքենան կանգնած է եղել, դռները բաց: Արտյոմը տանը չի եղել: Դա լսելուց հետո իր մոտ վատ կանխազգացում է առաջացել, թե որ տեղ է Արտյոմը: Ինքը արագ վեր է կացել, ձայն տվել Վազգենին և մեքենայով գնացել են հայրական տուն: Տանը փնտրել են Արտյոմին, սակայն չեն գտել, հետո գնացել է տանիք տանող անցքի մուտքի մոտ և տեսել, որ աստիճանը այդտեղ չէ, իր ձեռքի բատարեյով լույս է գցել դեպի տանիք և տեսել աստիճանի վերևի մասը, հետո աջ ու ձախ շարժելով բատարեն տեսել պարանը և պարանից կախված Արտյոմին:

Նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել Գոհար Կարապետյանը, որ 2018թ. նոյեմբերի 21-ին Արտյոմը առավոտվանից անընդհատ իրեն զանգել է, ինքը չի պատասխանել: Երեկոյան կողմը ժամը 17:00-ից սկսել է ավելի հաճախ զանգել և հաղորդագրություն գրել: Ժամը 17:15-ին ինքը կարդացել է Արտյոմի ուղարկած հաղորդագրությունը, որտեղ Արտյոմը գրել է, որ դրա հետ շատ տեղ չգնաս, սեքս չանես հետը, սիրում եմ քեզ: Այդ օրվա ընթացքում Արտյոմից էլի հաղորդագրություններ են եկել, որտեղ գրել է, որ իր եղբայրն ու հայրը զոջալու են իրենց արածի համար, լավ մնա սիրում եմ քեզ: ԻՆքը հաղորդագրությունները կարդալուց ջղայնացել և ջնջել է: Դրանից հետո սիրտը վատ բան է գուշակել, ինքը հետ է զանգել, սակայն Արտյոմը չի պատասխանել, ինքը հաղորդագրություն է ուղարկել, Արտյոմը էլի չի արձագանքել: Դրանից անհանգստացած իր միջնեկ տղային՝ Գևորգին խնդրել է գնալ Արտյոմի պապիկի տուն, տեսնել Արտյոմը այնտեղ է թե ոչ: Մի որոշ ժամանակ անց Գևորգը ասել է, որ տանը մարդ չկա: Մոտ կես ժամ հետո երեխան գյուղից իմացել է, որ Արտյոմը իրեն կախել է:

Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտ է պարզել, Արտյոմ Կարապետյանը ինքնասպանություն գործելու ժամանակ ինչպիսի հոգեբանական վիճակում է գտնվել, որ անհատական հոգեբանական առանձնահատկությունները կարող էին էապես ազդել տվյալ իրավիճակում նրա վարքի վրա, որը կարող էր հանգեցնել ինքնասպանության, ինչպես նաև այլ հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-245-րդ և 248-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Վարույթումս գտնվող թիվ 44109218 քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբանական փարձաքննություն, որի կատարումն հանձնարարել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի բժշկական հոգեբանության ամբիոնի հոգեբան-փորձագետներին:

2.Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.
ա/ Ի՞նչ հոգեվիճակում է գտնվել փորձաքննվողը մահվանը նախորդող /ինքնասպանության նախորդող/ ժամանակաշրջանում:
բ/ Ինչպիսի՞ անհատական-հոգեբանական առանձնահատկություններ է ունեցել փորձաքննվողը:
գ/ Ինքնասպանություն գործելու ժամանակ փորձաքննվողը ինչպիսի հոգեբանական վիճակում է գտնվել, որ անհատական հոգեբանական առանձնահատկությունները կարող էին էապես ազդել տվյալ իրավիճակում նրա վարքի վրա, որը կարող էր հանգեցնել ինքնասպանության:
3.Փորձագետին խնդրել՝ պատասխանել նաև այն հարցերին, որոնք, թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակության ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

Փորձագետին պարզաբանել ՀՀ քր.դատ.օր.-ի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քր.օր.-ի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:
4. Փորձագետին տրամադրել սույն որոշումը և քրեական գործի նյութերը: Անհրաժեշտ այլ փաստաթղթերը կներկայացվեն համապատասխան միջնորդության հիման վրա:

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային
քննչական վարչության քննիչ Ա. Բաղդասարյան